ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի սեպտեմբերի 3-ից 4-ը Ֆիլիպինների Հանրապետությունում (ք.Մանիլա) Ասիական զարգացման բանկի կողմից կազմակերպված «Climate Adaptation Investment Planning Forum (CAIP2025)» խորագրով համաժողովին մասնակցության արդյունքների մասին

1. **<u>Գործուղվողը, զբաղեցրած պաշտոնը՝</u>**

   Արմեն Մանուկյան, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներդրումային ծրագրերի համակարգման, տնտեսագիտական վերլուծության և մոնիթորինգի վարչության պետ

2. **<u>Գործուղման վայրը և ժամկետները՝</u>**

   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025թ. օգոստոսի 20-ի թիվ 1993-Ա հրամանի համաձայն 2025 թվականի սեպտեմբերի 1-ից 6-ը գործուղվել եմ Ֆիլիպինների Հանրապետություն քաղաք Մանիլա:

3. **<u>Հրավիրող կողմը՝</u>**

   Ասիական զարգացման բանկ (ԱԶԲ)

4. **<u>Գործուղման նպատակը՝</u>**

   Մասնակցություն «Climate Adaptation Investment Planning Forum (CAIP2025)» խորագրով համաժողովին:

5. **<u>Քննարկված թեմաները՝</u>**

Համաժողովին մասնակցում էին 23 զարգացող անդամ երկրների բարձրաստիճան պաշտոնյաներ, 36 զարգացման գործընկեր հաստատությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև ԱԶԲ-ի համապատասխան ղեկավար կազմի ներկայացուցիչներ և փորձագետներ: Համաժողովի ինտերակտիվ նիստերի և խմբային քննարկումների ընթացքում մասնակիցները կիսվել են իրենց փորձով, ներկայացրել կիրառված գործիքակազմերը, մեթոդաբանությունները և ուսումնասիրությունները, որոնք ուղղված էին տարածաշրջանում կլիմայի հարմարվողականության ներդրումների ընդլայնմանը:

Քննարկվել են նաև կլիմայի փոփոխության հարմարվողականության ոլորտում մասնակից երկրների հանրային ներդրումների կառավարման համակարգի ընթացակարգերին ներկայացվող նոր պահանջները, հանրային ներդրումների կառավարման ոլորտում իրականացվող միջոցառումները, առկա մարտահրավերներն ու դրանց հաղթահարման համար ուղղվող աշխատանքները, ծրագրերի ընտրության վերաբերյալ որոշումների իրազեկման արդյունավետ մոտեցումները՝ բյուջետային գործընթացի համատեքստում:

6. **<u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝</u>**

Համաժողովի խմբային քննարկումների ընթացքում իմ կողմից ընդհանուր առմամբ ներկայացվել է այն միտքը, որ ՀՀ կառավարությունը գիտակցելով հանրապետության զարգացման համատեքստում կլիմայի փոփոխության ազդեցությունը՝ ձեռնարկել է և շարունակում է իրականացնել գործողություններ՝ ուղղված կլիմայի փոփոխության հետևանքների նկատմամբ հարմարվողականության իրականացմանն ու պլանավորման աջակցմանը, միևնույն ժամանակ՝ ինստիտուցիոնալ մակարդակում իրականացվող գործողությունների միջոցով անդրադառնալով արդեն իսկ առկա կլիմայի փոփոխություններին, և առանձնահատուկ շեշտադրելով կլիմայի փոփոխություններին առնչվող քաղաքականության և ծրագրերի կարևորությունը: Վերոնշյալի հիմքում ընկած է այն պատկերացումը, որ կլիմայի փոփոխության նկատմամբ ներկայիս և կանխատեսվող խոցելիությունների արձագանքման ողջամիտ պլանավորումը երկարաժամկետ հեռանկարում կհանգեցնի խնայողությունների, սոցիալական առողջության և անվտանգության բարելավման, աղետների վնասների նվազեցման, նոր գործարար հնարավորությունների առաջացման և ներդրումների ավելի մեծ անվտանգության: Համաժողովի կազմակերպիչների կողմից բարձր են գնահատվել Հայաստանում իրականացվող բարեփոխումները:

7. **<u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝</u>**

Կազմակերպիչների կողմից ընդգծվել է կարևորությունը՝ նմանատիպ համաժողովներից հետո մասնակիցների միջև գործնական շփումների և տեղեկատվության փոխանակման

շարունակականության ապահովման և ձեռք բերված գիտելիքների գործնականում կիրառման:

8. **Ստորագրությունը, ամսաթիվը՝**

Արմեն Մանուկյան

09 սեպտեմբերի, 2025թ.